ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է 2004 թվականի դեկտեմբերի 14-ին

ՓՈՍՏԱՅԻՆ ԿԱՊԻ ՄԱՍԻՆ

Հոդված 6. Փոստային կապի և (կամ) սուրհանդակային կապի օպերատորի և ազգային օպերատորի պարտականությունները

(վերնագիրը փոփ. 11.05.11 ՀՕ-157-Ն)

Փոստային կապի և (կամ) սուրհանդակային կապի օպերատորը և ազգային օպերատորը պարտավոր են՝

ա) ունենալ կառավարության որոշմամբ սահմանված նվազագույն պահանջներին համապատասխան անհրաժեշտ տեխնոլոգիական սարքավորումներ և մեքենայացման, ավտոմատացման և տեղեկատվայնացման միջոցներ՝ փոստային կապի կամ սուրհանդակային կապի ծառայություններից օգտվողի համար.

բ) ապահովել հսկիչ ժամկետներում նամակագրական թղթակցության առաքումը փոստային կապի ծառայություններից օգտվողներին.

գ) ապահովել փոստային կապի կամ սուրհանդակային կապի ծառայություններից օգտվողներից ընդունված փոստային առաքանու և դրամական միջոցների փոստային փոխադրությունների պահպանությունը.

դ) ապահովել փոստային կապի կամ սուրհանդակային կապի գործունեությունը կանոնակարգող նորմատիվ փաստաթղթերով սահմանված ստանդարտներին համապատասխան՝ փոստային կապի կամ սուրհանդակային կապի ծառայությունների որակը, ինչպես նաև դրա համապատասխանությունը պայմանագրի պայմաններին և տվյալ ծառայությունների մատուցման պայմանների վերաբերյալ տեղեկատվությանը.

ե) ապահովել փոստային կապի կամ սուրհանդակային կապի գաղտնիության պահպանումը.

զ) օրենքով սահմանված դեպքերում և կարգով աջակցել իրավապահ մարմիններին օպերատիվ-հետախուզական միջոցառումների անցկացման և դատավարական գործողությունների կատարման ժամանակ.

է) ապահովել մատչելի տեղեկատվություն փոստային կապի կամ սուրհանդակային կապի ծառայությունների սակագների, փոստային առաքանու առաքման ժամկետների, աշխատանքի ռեժիմի վերաբերյալ, ինչպես նաև անհրաժեշտ այլ տեղեկություններ, որ մատչելի է դարձնում փոստային կապի կամ սուրհանդակային կապի ծառայությունների մատուցումը÷.

ը) ապահովել մաքսային մարմնի համար ամբողջական հասանելիություն սույն հոդվածի 1-ին մասի «ա» կետում նշված սարքավորումներին և միջոցներին:

Փոստային կապի ազգային օպերատորը պարտավոր է Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում ապահովել փոստային կապի ունիվերսալ ծառայությունների մատուցումը:

Սույն հոդվածի առաջին մասի «ը» կետում նշված ամբողջական հասանելիության ձևաչափը սահմանվում է փոստային կապի բնագավառում լիազորված պետական կառավարման մարմնի և մաքսային մարմնի համատեղ հրամանով:

(6-րդ հոդվածը փոփ. 11.05.11 ՀՕ-157-Ն)

Հոդված 9. Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորությունները փոստային կապի բնագավառում

Հայաստանի Հանրապետության կառավարությունը փոստային կապի բնագավառում՝

ա) ***(կետն ուժը կորցրել է 09.04.07 ՀՕ-173-Ն)***

բ) սահմանում է փոստային կապի ազգային օպերատոր.

գ) լիազորում է փոստային կապի ազգային օպերատորին մատուցելու փոստային կապի ունիվերսալ ծառայություններ և կրելու Հայաստանի Հանրապետության փոստի խորհրդանիշը.

դ) սահմանում է փոստային կապի ունիվերսալ ծառայությունների սակագների կարգավորման հետևանքով փոստային կապի ազգային օպերատորի չստացած եկամուտների փոխհատուցման կարգը.

ե) սահմանում է փոստային կապի բնագավառում լիազորված պետական կառավարման մարմին.

զ) իրականացնում է սույն օրենքով և իրավական այլ ակտերով իրեն վերապահված այլ լիազորություններ.

է) հաստատում է փոստային կապի բնագավառում մոնիտորինգի իրականացման կարգը÷.

ը) հաստատում է սույն օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետով նախատեսված տեխնոլոգիական սարքավորումներին և մեքենայացման, ավտոմատացման և տեղեկատվայնացման միջոցներին ներկայացվող

նվազագույն պահանջները և դրանց միջոցով փոստային և սուրհանդակային կապի օպերատորից, ինչպես նաև վերջիններիս միջոցով փոստային կապի և սուրհանդակային կապի ծառայություններից օգտվողներից հավաքագրվող փաստաթղթերի և տեղեկությունների ցանկը:

(9-րդ հոդվածը փոփ. 09.04.07 ՀՕ-173-Ն, լրաց. 07.12.22 ՀՕ-507-Ն)

(07.12.22 ՀՕ-507-Ն օրենքն ունի անցումային դրույթ)